

էր տալիս որ ճշմարտութիւնը խոստովանէ։ Բայց ելաւ կանգնեցաւ Նաւ Աստուծոյ անմահ Որդին որում շէր Նաւը ըմբռնել ի մահումէն։ Ելաւ և յեղանկն Նորա՝ երկիր շարժեցաւ և երկիրը խոտովեցան և ամպը ջրովեցին զճուր։ ձայն արձակեաց չգորն և յաջեղ ձայնէ Նորա զերեզմանը բացան և լրացում մարմինը ննջեցելոց սրբոց յարեան։ — Ո՛հ արիւ ե՛լ կրկին Թագաւոր Յիսուս և համաշխարհային այս մեռելութեան մէջ հնչէ թող Բո յարուցիչ ձայնը։ չարչարանաց փշեայ պատկի ներքոյ ճնշուած աստուածային զեմք մեր մարդկային պղտոր աչքերով ճանաչել չկարողացանք։ արի փառօք և զօրութեամբ և Բո յաղթական քայլերի առաջ թող տեղի տայ ամեն ամբարտաւանութիւն և ննջութիւն և չարութիւն։ Արի Աստուած և դատեն զերկիր— և մի՛ զօրացի մարդ։— Հեռու հեռուից ազնիւ գայրոյթի և մաքուր ոգեւորութեան աղաղակ է լսուում։ դեռ է մեռել մարդու կրծքի տակ ամեն հեթոտական զգացում ամեն տենչ դէպի աւելի բարձր աւելի արժանավայել։ աւելի զազափարական մի կեանք։ ձայն տուր Փրկիչ և թող բացուին մեր զերեզման կրծքերը։ կենդանանայ և իշխէ այն ինչ որ սուրբ է և Բո սուրբ անուանը արժանի։ Արի՛ Տէր և փրկեալ զիս։

«Յարիցէ Աստուած, և ցրուեցին ամենայն թշնամիք Նորա»։

«Ճանապարհ արարէր այնմիկի որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս»։

Ն. Վ.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՏՕՆԵՐԻ ՍԿԻՋԷԸ

Ե Ի

Պ Ա Ս Է Ք Ի Վ Է Ճ Ը

Քրիստոնէութեան ամենահին տօնը կիրակէն է։ Յայտնի է թէ ինչպիսի խառութեամբ սուրբ էին պահում հրէաները շաբաթ օրը։ Բնականաբար հրէութիւնից դար-

ձած առաջին քրիստոնեաներն այդ ամենանուիրական սովորութիւնը մի անգամից չթողին։ ինչպէս Գործք առաքելոց նկարագրում է նոքա առհասարակ կրկնակի աստուածպաշտութեան կարգեր ունէին։ դուրսը տաճարում և ժողովարաններում միւս հրէաների հետ նոքա կատարում էին այն ինչ որ աղգային սովորութիւն էր։ իսկ ներսը ընտանեկան նեղ շրջանում քարոզով և խօսակցութեամբ։ ս. Գրքի ընթերցանութեամբ և երգով վերարտադրում էին յիշողութեան մէջ այն ճշմարտութիւնները որ աւանդ էին ստացել Նրինաւոր Վարդապետից։ արծարծում այն ականալութիւնները որ Նորա երկրորդ դարստեան համար ունէին։ Այսպիսի ընտանեկան ժողովներ սկզբում երեւի ամենայն օր տեղի էին ունենում բայց երբ համայնքն ընդարձակուեցաւ աշխարհի հետ շփուել սկսեց և հաւածանքները սաստկացան ամենօրեայ ժողովներ զրեթէ անկարելի պիտի դառնային և կարիք պիտի յառաջ գար մի որոշ օր նշանակել հանգիստաւոր կերպով միատեղ ժողովուելու մանաւանդ ս. հաղորդութեան խորհուրդը կատարելու համար որ միութեան ամենակարեւոր տեսանկի կապն էր նոցա և Փրկչի և փոխադարձարար իրար մէջ։ Այդ օրը նոր ընտրելու հարկ չկար իսկապէս ս. յարութեան յիշատակով նուիրագործուած միաշաբթին անշուշտ հաւատացեալների աչքում սկզբից և եթ առանձին յարդ ունէր և զըխաւոր ժողովները այդ օրն էին լինում Պօղոս առաքելը պատուիրում է Կորնթացիներին «ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն կամաւոր նուէրներ ժողովել Նրուապղէմի աղքատ համայնքի համար (Ա. Կորնթ. Ժ. 2) և Տրովադայում նա նոյն այդ օրն է* ժողով դուժարում հաց ընկանելու (ս. հաղորդութեան խորհուրդը կատարելու) և հաւատացեալներին իւր հրաժեշտի ողջոյնը տալու համար։ Արդէն Յովհաննու Յայտնութեան մէջ (Ա. 10) այդ օրը կիրակէ է անուանած։ այսինքն տեղումնական։ Տիրոջ նուիրում օր։ Նրկրորդ դարի յիշատակարաններից յայտնի է որ ան-

* Գործք Ի. 7 ընագրի մէջ ասած է «Այլ Ի միտմն շաբաթուց» որ նշանակում է միաշաբթի օրը։

տեղի էր համարուում կիւրակէ օրը, իբրեւ ուրախութեան օրս ծոմ պահել կամ ծնկաչոք աղօթել: Իսկ աշխատանքից հանգստանալը կապ ունի անշուշտ այն հանգամանքի հետ, որ երբ Բրիտտոնէութիւնը հրէական նեղ շրջանակից ելաւ և հեթանոս աշխարհի մէջ հաստատուն հիմք դրեց, շարաթը սուրբ պահելու սովորութիւնն ևս հետզհետէ դադարեց և նորա տեղը բռնեց կիւրակէն. թէպէտ ամենահին յիշատակութիւններն այս մասին կիւրակէ օրը չաշխատելու պահանջը ոչ թէ Հին Կտակարանի օրէնքով, այլ քրիստոնէական սկզբունքներով են բացատրուած: Առաջին անգամ Կոստանդիանոս Մեծ իւր բոլոր պետութեան համար կիւրակէն իբրեւ պարտաւորեալ հանգստութեան օր հրատարակեց և նորա վերաբերեալ որոշ օրէնքներ հաստատեց: Կիւրակէ օրուայ հետ մէկտեղ առանձին նշանակութիւն ստացան հսկման կամ պահոց օրերը՝ շորեքշաբթին և ուրբաթը, որի համար օրինակ է եղել կրկին հրէից երկուշաբթի և հինգշաբթի օրերը պահելու սովորութիւնը. եկեղեցական տեսակետով շորեքշաբթին Բրիտտոսի մատնութեան համար կազմուած խորհրդի յիշատակն է, ուրբաթը Բրիտտոսի խաչելութեան յիշատակը:

Այսպէս ուրեմն Փրկչական կեանքի վերջին շաբաթը խորհրդաւոր լոյս է սփռում իւրաքանչիւր շաբաթուայ օրերի վերայ, աստեղծական կերպարանք և նշանակութիւն տալիս նոցա: Բայց քանի եկեղեցին յառաջ գնաց և պաշտամունքը դարգացաւ, բնականաբար պահանջ պէտք է զգացուէր նաեւ ընդհանուր տարեկան տօներին: Հրէից մէջ այդպիսի տօներից ամենակարեւորը և ամենախորհրդաւորն էր պասէքը, որի հետ կապուած էին ամենաթանկագին քրիստոնէական յիշատակներ: Հասկանալի է ըստ ինքեան, որ առաջին հաւատացեալները թէ իբրեւ հրէայ և թէ իբրեւ ականատես վկայ այդ յիշատակների, անտարբեր լինել դէպի պասէքի մեծ տօնը չէին կարող. և յիշաւ զանէ Ա. Կորնթ. Ե. 7—8 հ. Պօղոս առաքելը այն ականարկը թէ քրիստոնէակաները՝ ընդունելով Բրիտտոսին իբրեւ իրենց համար զենուած նոր դատիկ, ճշմարիտ այդ խորհրդի համաձայն տօն պէտք է կատարեն:

Իրաւունք է տալիս մեզ ենթադրելու, որ նորա ժամանակ պասէքի տօն կատարուում էր և այդ տօնի մերձ լինելն էր առիթ այսպիսի մի ականարկ անելու: Երանայն դէպս Եւսեբիոսի Եկեղ. պատմութեան մէջ* յառաջ բերած մի քանի վկայութիւններ հին հայրերի զբոսաւանդներից ցոյց են տալիս, որ այդ տօնի կատարումը շատ հին է և մինչև առաքելոց ժամանակներն է հասնում: Երանոս յիշելով այստեղ Պօղիկարպոս եպիսկոպոսի Հռոմ գալը (նորագոյն հետազօտութիւնների համաձայն 154 թ. ին) և Անիկոսոս եպիսկոպոսի հետ ինչ ինչ խնդիրների մասին համաձայնութիւն կայացնելը՝ աւելացնում է. «Նաեւ կարէր իսկ ոչ Անիկոսոս հաւանեցուցանել զՊօղիկարպոս եթէ մի պահեցէ զօրս զայս. քանզի ընդ Յովհաննու աշակերտին Տեառն մերոյ և ընդ այլ առաքելայ շրջեցաւ նա և ընդ նոսա պահեաց զօրս զայս. և ոչ Պօղիկարպոս հաւանեցոյց ինչ զԱնիկոսոս պահել որ պատասխանի առնէր նմա եթէ արժան է մեզ զգոյշ լինել սովորութեան եպիսկոպոսաց մերոց, որ յառաջ քան զմեզ կացին. և յայս պայման զոլով սոցա հաղորդեցան ընդ միմեանս և ետ Անիկոսոս մատուցանել Պօղիկարպոս պատարագ յեկեղեցւոյ, և խաղաղութեամբ մեկնեցան ի միմեանց»: Երանոսի այն թուղթը, որից Եւսեբիոս առել է այս հատուածը, զրուած է Բ. դարի վերջերում Հռոմի Վիկտոր եպիսկոպոսին: Սա կրկին անգամ վէճի բռնուելով Փոքր Ասիոյ եկեղեցիների հետ, մեղադրում էր նոցա այն բանի համար, որ պասէք էին կատարում հրէից հետ միասին, Հին Կտակարանի օրինաց համաձայն Նիսան ամսի 14-ին, ինչ օր և պատահէր, մինչդեռ Հռոմ և ուրիշ արեւմտեան ու մի շարք արեւելեան եկեղեցիներ տօնում էին Բրիտտոսի յարութեան յիշատակը յաջորդ կիւրակէ օրը: Դիտաւոր ընդհարումը յառաջ էր զալիս նորանից, որ այս վերջին կարգի եկեղեցիները յարութեան տօնից առաջ պահէին պահում, սկզբում 40 ժամ (Բրիտտոսի գերեզմանում մնացած ժամերի թուով)՝ ապա հետզհետէ ընդարձակելով՝ մի շաբաթ:

* Եւսեբիոսի Պատմ. ԳԼ. ԽԴ:

և վերջապէս 40 օր՝ իսկ Փոքր-Ասիացիք Նիսանի 14-ին պատէք կատարելով պահքը լուծում էին* և ուրախութիւն անում այն ժամանակ՝ երբ իրենց քրիստոնեայ եղբայրների համար դեռ պահք և ապաշխարութեան օրեր էին։ Այս անհարթութիւնը վերջացնելու նպատակաւ եկեղեցական ժողովներ եղան, թղթեր փոխանակուեցան եկեղեցեաց ներկայացուցիչների մէջ և Հռոմի Վիկտոր եպիսկոպոսն այնտեղ հասաւ, որ կամենում էր բանադրել և եկեղեցուց մերժուած հրատարակել Փոքր-Ասիացիներին, որովհետեւ նոքա չէին կամենում ոչ մի կերպ տեղի տալ և մանաւանդ նոցա զլիաւոր ներկայացուցիչ Նիքետի Պողիկրատէս եպիսկոպոսը իւր նորան գրած թղթի մէջ բազմաթիւ վկայութիւններով ապացուցանում էր իրենց սովորութեան նախնական և առաքելական լինելը, բայց նոյն իսկ Վիկտորի կողմնակիցները չհամակրեցին և անտեղի համարեցին նորա այս ոտնձգութիւնը և Նրանոս նշանաւոր «հետեւողն առաքելոց», իւր յիշեալ թղթով խաղաղասիրութեան և արդարամտութեան է յորդորում նորան։

Այսպէս տարաձայնութիւնը տեւեց մինչև Դ. դար, երբ Նիկիոյ ս. ժողովը ի թիւս այլոց նաև այս խնդիրը վերջնականապէս լուծեց, արգելելով Փոքր-Ասիացւոց Նիսանի 14-ին պատէք տօնելու սովորութիւնը։

Հարց է այժմ, թէ ի՞նչ էր իսկապէս նոցա կատարած պատէքը, երբ և ի՞նչպէս սկսուեցաւ բաժանումը նոցա և միւս եկեղեցիների մէջ։ Այս հարցը շատ է զբաղեցրել մեր դարու եկեղեցական պատմիչներին և մի շարք կարեւոր երկասիրութեանց առարկայ է եղել։ Վերջին ժամանակ գրեթէ ամէնքը համաձայն են Պրոֆ. Շիւրերի այն կարծիքին, որ Փոքր Ասիացիք պատէքը տօնում էին ի յիշատակ Բրիստոսի կատարած վերջին պատէքի, վերջին խորհուրդուր ընթրեաց, և իրենց սովորութեան հիմք ընդունում էին այն, որ Նա ինքը Նիսանի 14-ին է պատէք կատարել և 15-ին խաչուել, և կամ որ Հին կտակարանի որոշումը պարտաւորեցուցիչ է նաև քրիս-

տոնեաների համար* մինչդեռ միւս եկեղեցիները պատէքի խորհուրդը Բրիստոսի յաւութեամբ լրացած համարելով և Հին օրինաց պարտաւորեցուցիչ լինելը մերժելով պահանջում էին, որ այդ տօնը անպատճառ կիւրակէ օր կատարուի և հիմնում էին այդ պահանջը նոյնպէս առաքելական աւանդութեան վերայ, և որովհետեւ երկու կողմի համար ևս տօնը սկսուում էր պահքով և վերջանում ս. հաղորդութեան խորհրդի կատարմամբ՝ պահանջուում էր ուրեմն, որ միաժամանակ պահք սկսուի և միաժամանակ լուծուի։

Մենք առիթ ենք ունեցել այս հարցով առանձնապէս զբաղուելու** և Հին յիշատակարաններն ու նոր մեզ մատչելի գրուածները ուշի ուշով հետազօտելուց յետոյ մի քանի էական կէտերում տարբեր եզրակացութեան ենք յանգել։—Փոքր-Ասիացւոց պատէքը ըստ մեզ ոչ թէ Բրիստոսի վերջին ընթրեաց, այլ խաչելութեան և մահուան յիշատակն էր*** և նոքա Բրիստոսի մահը տեղի ունեցած էին համարում ոչ թէ Նիսանի 15-ին, այլ 14-ին, ճիշդ նոյն ժամանակ, երբ Հին կտակարանի օրինաց համաձայն հրէաները Պատէքի դառ պէտք է զենէին**** Արդէն այն հանգամանքը, որ Պօղոս առաքեալը «զատիկ մեր զենաւ Բրիստոս» ասում է, և որ Եովհաննէս աւետարանիչը Եւք թ. 46 զատկական զառան համար ասածը՝ «Ոսկր նորա մի՛ փշրեցի», յօշուեցաւ ի համար վկայութիւն է բերում, յոյց է տալիս, որ առաքեալներն իրենք Բրիստոսի և զատկական զառան մէջ խորհրդաւոր նմանութիւն էին գտնում և նորա մահուամբ կատարուած էին համարում զատկի խորհուրդը։ Եւ երբ Պողիկրատէս Փիլիպպոս Եովհաննէս առաքեալներին յիշելով մի

* Ոմանք այս 2 տարբեր կարծիքների պաշտպան 2 կուսակցութիւններ են ընդունում՝ հրէամիտ եւ ողջախոս, ըստ մեզ քոլորովին անհիմն կերպով։

** Բերլինում Պրոֆ. Հառնակի մօտ, որին պէտք է շարադրութիւն ներկայացնէինք այս մասին։

*** Այս կարծիքը ուրիշներն եւս յայտնել են։

**** Այս առթիւ աստուածաբանների մէջ Եովհաննէս եւ միւս աւետարանների յարաբերութեան նկատմամբ ընդարձակ վէճեր են եղել։

* Նոքա եւս պահք ունէին, քայք ինչպէս երեւում է մի օր միայն։

շարք իւր և հարեան եկեղեցեաց նշանաւոր հայրերի անուններ թուելով՝ ասում է. «Սոքա ամենեքեան պահեցին զօրն չորեքտասաներորդ զատիկ, որպէս և աւետարանն ասաց, և իւր ոչ խոտորեցան, այլ ըստ կանոնի հաւատոց ընթացան» և անցի ընդ ամենայն զիրս սուրբս՝ և ինչ նորա խօսքերն այնպիսի լուրջ և հանդիսաւոր բնաւորութիւն ունին, որ կասկածել չի կարելի թէ նորա համար այդ տօնը կատարելը յիրաւի մի հաւատոց կանոն էր, ամբողջ ա. զբքի վկայութեան վերայ հաստատուած. իսկ այդ կլինէր միայն այն ժամանակ, երբ նա պատեքի տօնի մէջ պատկերացած էր տեսնում խաչի մահուան, ուրիշ խօսքով փրկչական կեանքի բոլոր խորհուրդը:

Սովորաբար Երանոսի վերեւ յառաջ բերած խօսքերն այնպէս են հասկացուում, իբր թէ Անիկառոս Պողիկարպոսին համոզում էր ոչ Նիսանի 14-ը, այլ յաջորդ կիւրակէն պահել, ըստ մեզ բնագիրը թոյլ չէ տալիս այդ ներմուծութիւնն անելու. այնտեղ ասած է միայն, որ Պողիկարպոս պահում էր մի որոշ օր (14-ը), իսկ Անիկառոս չէր պահում: Սոյն Երանոս մի քանի տող վերեւ զրում է. «Եւ որք յառաջ քան զՍոտեր առաջնորդք էին այդք եկեղեցւոյ, որոյ ի գլուխ կաս դու այսօր՝ Անիկառոս և Պիոս և Հիզկիոս և Տիմոսփորոս և Բսեստոս, ոչ ինքեանք պահեցին և ոչ որոց ընդ նոցօք էին թոյլ ետուն պահել, մեր կարծիքով այդ նշանակում է, թէ Սոտերից (Վիկտորի անմիջական նախորդից) առաջ Հռոմի եկեղեցին ոչ զատկական պահք էր ճանաչում, ոչ զատկական տօն: Սորա օրով անկախ Փաբլ-Ասիացւոց կատարած պատեքից, սովորութիւն է յառաջ զալիս յարութեան մեծ յիշատակը, որ արդէն իւրաքանչիւր կիւրակէ տօնուում էր, առանձին շքով և հանդիսաւորութեամբ կատարել տարուայ մէջ մի որոշ կիւրակէ օր, որ մօտաւորապէս համապատասխան լինէր Բրիտանոսի յարութեան ժամանակին: Սորա հաջար իբրեւ փաստ կարող է ծառայել նաեւ այն հանգամանքը, որ ոչ Վիկտոր (որ առաջին Հռոմի եպիսկոպոսն է պապական ձգտումներով) և ոչ Անիկառոս իրենց զատը նախնական աւանդութեան

վերայ չեն հիմնում և միայն Եւսեբիոսի իւր կարծիքն է, թէ Հռոմի հետ համերաշխ եկեղեցիների մէջ «յառաքելոցն աւանդութենէ մինչև ցայսօր պահի սովորութիւնս» ոչ լուծանելով զպահս յայլում աւուր արտաքոյ քան զօրն յարութեան Փրկչին մերոյ:— Բայց երբ մի անգամ այս սովորութիւնը հաստատուեցաւ և պահանջ զգացուեցաւ, ինչպէս ա. Յարութեան յիշատակի, այնպէս նաեւ Փրկչական միւս նշանաւոր տնօրէնութիւնների համար տարուայ մէջ որոշ օրեր ունենալ այն ժամանակ Փաբլ-Ասիացւոց պատեք, որ հաւանականաբար նոցա միակ տարեկան տօնն էր, այս բոլորի խորհուրդն իւր մէջ պարունակող՝ ինքն ըստ ինքեան պէտք է կորցնէր նշանակութիւնը, նորա տեղը բռնեց և պատեք անունը իւր վերայ առաւ. Եւսեբիոսի տօնը, դառնալով այսպէս կուսան մի շարք ուրիշ տարեկան տօների համար: Ինչպէս յիշեցինք, տօնի նախընթաց պահոց և ապաշխարութեան շրջանը հետը հետէ ընդարձակուելով դարձաւ քառասնօրեայ պահք,* որի համապատասխան յառաջ եկաւ զատկական ուրախութեան մի յիսնօրեայ շրջան, երբ պահել և ծուներ գնելով ազօթիլ արգելուած էր և ամեն օր պատարագ պէտք է մատուցուէր, այս շրջանը վերջանում էր հոգեզաւստեան տօնով, քառասնօրեայ օրը կատարուում էր համբարձման յիշատակը:**— Միաժամանակ սկսեցին նաեւ մարտիրոսաց յիշատակը տօնել, նոցա նահատակութեան օրերում, ընդունելով նոյա մահը իբրեւ նոր ծնունդ երկնաւոր կեանքի համար, և ուրեմն նոցա տօնը իբրեւ ծննդեան տօն և ուրախութեան հանդէս:

17. 17.



* Դ. զարի վերջերս՝ Երուսաղէմի եկեղեցին սկսեց 8 շաբաթ պահել, որպէս զի շաբաթ եւ կիւրակէ օրերը լուծել կարողանայ եւ այնուամենայնիւ 40 օրը լրացած լինի, եւ այդ սովորութիւնը տարածուեցաւ արեւելքում:

* Աստուածայայտնութեան տօնի համար տես. Երաբատ 1896 յունուար: